ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/63

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Էդ. Սաղաթելյանի, Մ. Նիգարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, խորհրդանշական նվերների, թվային ֆոտոապարատների, ուժեղացուցիչների, տեսապրոյեկտորների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 13.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի 9-րդ չափաբաժնով գնանշման հարցում անցկացնելու որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերափոխել 9-րդ չափաբաժնով գնման համար նախատեսվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համաձայնեցնելով դրանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Բողոքներ քննող անձին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 07.04.2022թ.-ին:

Բողոքներ քննող անձի 11.04.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/6299-2022 գրությամբ բողոքը վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 13.04.2022թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

14.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/63 համարի ծածկագիրը:

27.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. <u>«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 13.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող., շ. 50, «Թեքեյան բիզնես կենտրոն», Հեռ. +374 10 52-13-56, E-mail: info@alpha.am) պաշտոնապես ներկայացնում է բողոք՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնանշման հարցման 9-րդ չափաբաժնի մասով անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության կոպիտ խախտումների դեմ:

Ս.թ. մարտի 31-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ARMEPS համակարգի միջոցով՝ info@armeps.am էլեկտրոնային փոստից ստացել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով էլեկտրոնային ձևով անցկացվող գնանշման հարցման հրավերն (Հրավերի պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» պատճենը՝ 3 (երեք) թերթ կցված է սույն բողոքին):

Ս.թ. ապրիլի 01-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն համաձայն 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի ARMEPS համակարգի միջոցով դիմել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, խնդրելով տալ պարզաբանումներ 9-րդ չափաբաժնով 4 (չորս) առաջացած հարցերի և 1 (մեկ) նկատառման վերաբերյալ:

Նշենք, որ 9-րդ չափաբաժնով Պատվիրատուն նախատեսում է գնել 20 (քսան) լրակազմ (թվային պրոյեկտոր, 240 x 240 սմ էկրան, շարժական-կարգավորվող պրոյեկտորի առաստաղային կախիչ և այլն) 10.4 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ:

Ս.թ. ապրիլի 04-ին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ARMEPS համակարգի միջոցով հրապարակել է պաշտոնական պարզաբանում (ARMEPS համակարգից արտատպված Պարզաբանման հարցման և գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանման պատճենները՝ 1 (մեկ) թերթ յուրաքանչյուրը կցված են սույն բողոքին):

Ցավոք, պարզաբանման հարցման մեջ պարունակվող 4 հարցերին և 1 նկատառմանը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվել է ընդամենը 1 (մեկ) քիչ թե շատ ընդունելի պարզաբանում՝ թվով 4-րդ հարցի վերաբերյալ:

Մնացած 3 հարցերի և 1 նկատառման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումները հանդիսանում են ոչ միայն անփույթ կատարված խուսագրություն, ոչ միայն անընդունելի են տեխնիկական տեսակետից, այլ և նույնիսկ հակասում են պարզ տրամաբանությանը:

1) Ակնհայտ է, որ ցանկացած սարքավորում ունի իր հիմնական տեխնիկական բնութագրերը: Այսպես, օրինակ, ներքին այրման շարժիչների համար հիմնական բնութագրերն են՝ տեսակը (բենզինային կամ դիզելային), աշխատանքային ծավալն ու հզորությունն:

Իր հերթին, ցանկացած թվային պրոյեկտորի երկու հիմնական բնութագրերն են՝ պայծառությունը (լուսային հոսքը) և իսկական (ֆիզիկական, native) կետայնությունն, որոնցով էլ անմիջապես բնորոշվում են արտացոլվող պատկերի որակը և սարքի արժեքը:

Բնական է, ինչքան բարձր լուսային հոսք է ապահովում թվային պրոյեկտորն, այնքան ավելի պայծառ պատկեր է նա ունակ վերարտադրել և այնքան ավելի լուսավորված սենյակում աշխատել:

Ցավոք, 9-րդ չափաբաժնի բնութագրերում այդ կարևորագույն ցուցանիշն իսպառ բացակայում է, ուստի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն վերոհիշյալ Պարզաբանման հարցման հենց 1-ին հարցով խնդրել էր «նշել ցանկացած թվային պրոյեկտորի երկու հիմնական բնութագրերից մեկը՝ պայծառությունն, արտահայտված լյումեններով (Lumens)»:

Գնահատող հանձնաժողովի կողմից այս հարցին տրված պարզաբանումը պարզապես ապշեցուցիչ է, եթե չասենք շատ ավելին՝ «Տեսապրոյեկտորը՝ ընդունելի է պայծառության ցանկացած ցուցանիշով՝ Lumens»:

Կիրարենք այս պատասխանն ուրիշ օրինակի վրա՝ ենթադրենք, որ պատվիրատուն հայտարարել է բեռնատար ավտոմեքենայի ձեռքբերման գնանշման հարցում և պարզաբանման հարցմանը, թե քանի՞ տոննա բեռ տեղափոխող բեռնատար է իրեն հարկավոր՝ 1 տոննա թե 50, նա պատասխանում է, որ Պատվիրատուի համար ընդունելի է ցանկացած տարբերակը:

Տրված պարզաբանումից առաջ է գալիս 2 եզրակացություն՝

a) Գնահատող հանձնաժողովն առանց որևէ կասկածանքի նույն պատրաստականությամբ պատրաստ է գնել ՀՀ ՊՆ-ի կարիքների համար թե մութ սենյակում ճրագի լույսին հավասար 50 լյումեն (Lumen) պայծառություն ունեցող 20 հատ պրոյեկտորներ, թե նույն 9-րդ չափաբաժնով պահանջվող 240 x 240 սմ չափի էկրանների հետ լիովին համատեղելի 4000–5000 լյումեն (Lumen) պայծառություն ունեցող 20 հատ պրոյեկտորներ:

Այսինքն, գնահատող հանձնաժողովը նույնիսկ նեղություն չի կրել որոշել պայծառության (լուսային հոսքի) այն նվազագույն ցուցանիշը, որից ցածր լուսային հոսք ունեցող պրոյեկտորների ձեռքբերումը ՀՀ ՊՆ-ի կարիքների համար դառնում է առնվազն անիմաստ, եթե ավելին չասենք:

b) Գնահատող հանձնաժողովն ընդհանրապես չի պատկերացնում գնման առարկայի օգտագործման նպատակը, ձախողել է և չի կարողացել օբյեկտիվորեն հիմնավորել գնման առարկայի բնութագրերը և գնման առարկայի համարժեքությունը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

2) Ցանկացած թվային պրոյեկտորի 2-րդ հիմնական բնութագիր է հանդիսանում նրա իսկական (ֆիզիկական, native) կետայնությունը:

Ստորև տրվում է համառոտ և պարզ տեխնիկական պարզաբանում, որը, համոզված ենք օգտակար կլինի նաև «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնանշման գնահատող հանձնաժողովի համար:

Պատկեր արտացոլող ցանկացած սարք՝ սկսած արդեն իսկ գրեթե մոռացված էլեկտրոնային-ճառագայթային խողովակներով հեռուստացույցներից և վերջացրած ժամանակակից հեղուկ-բյուրեղային (LCD) հեռուստացույցներով, մոնիտորներով և թվային պրոյեկտորներով պատկերը կառուցում է փոքր կետերից (անգլերեն՝ pixel):

Այսպես, օրինակ՝ բոլորիս քաջ հայտնի Full HD առտահայտությունն որևէ սարքի առնչությամբ նշանակում է, որ տվյալ սարքի հեղուկ-բյուրեղային (LCD) մատրիցան կամ DLP-չիպը բաղկացած է 1920 հորիզոնական և 1080 ուղղահայաց կետերից կառուցված տողերից, իսկ նրա կետերի (պիքսելների) ընդհանուր քանակը կազմում է 1,920 x 1,080 pixels = 2,073,600 pixels:

Եվ հենց այդ ֆիզիկական կետերից կառուցված հորիզոնական և ուղղահայաց տողերի հարաբերակցությունը կոչվում է իսկական (ֆիզիկական, native) կետայնություն և միանգամայն բնորոշվում է ցանկացած մոնիտորի, դիսպլեյի կամ պրոյեկտորի պատկերի որակը:

Բնականաբար, ինչքան բարձր է սարքի հեղուկ-բյուրեղային (LCD) մատրիցայի կամ DLP-չիպի ընդհանուր կետերի քանակն, այնքան բարձր որակի պատկեր է կարողանում արտացոլել տվյալ սարքը:

Իսկական (ֆիզիկական) կետայնությունը պետք է տարբերել արհեստական (ինտերպոլացված, supported) կետայնությունից, որը բնութագրում է պրոյեկտորի կամ դիսփլեյի ընդունակությունը մեկ կամ մի քանի աստիճան ցածր կամ բարձր կետայնությամբ տեղեկատվություն ընդունել ազդանշանի աղբյուրից, համապատասխանեցնել այն տվյալ սարքի իսկական (ֆիզիկական, native) կետայնությանը և արտացոլել այն:

Այսպես, օրինակ, SVGA (800 x 600 pixels / total 480,000 pixels) իսկական (ֆիզիկական) կետայնությամբ պրոյեկտորը կարող է ընդունել Full HD (1,920 x 1,080 pixels/ total 2,073,600 pixels) կետայնությամբ ազդանշան, սակայն այդ ազդանշանը նա արտացոլելու է նույն անփոփոխ SVGA (800 x 600 pixels) կետայնությամբ:

Այսինքն, այս դեպքում պրոյեկտորը ստիպված է արհեստականորեն 4 անգամ իջեցնել ստացված Full HD ազդանշանի որակը, որպեսզի կարողանա այդ Full HD

կետայնությամբ ազդանշանը արտացոլի իր ընդամենը SVGA իսկական (ֆիզիկական) կետայնությամբ LCD մատրիցայի կամ DLP-չիպի միջոցով:

Այժմ անդրադառնանք բուն հարցին՝ քանի որ 9-րդ չափաբաժնի բնութագրերում իսպառ բացակայում է թվային պրոյեկտորների նաև 2-րդ կարևորագույն ցուցանիշը՝ Իսկական (ֆիզիկական) կետայնությունը, ուստի «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն վերոհիշյալ Պարզաբանման հարցման հաջորդ հարցով խնդրել էր «տալ պարզաբանում ցանկացած թվային պրոյեկտորի երկրորդ հիմնական բնութագրի վերաբերյալ՝ արդյո՞ք նշված կետայնություններից (Full HD, UXGA և այլն) կոնկրետ ո՞ր կետայնությունն է հանդիսանում պահանջված սարքի իսկական (ֆիզիկական, native) կետայնությունը»:

Գնահատող հանձնաժողովի կողմից այս հարցին տրված պարզաբանումը՝«Ձեր կողմից նշված կետայնությունը պետք է ապահովի կետայնության այնպիսի ցուցանիշ, որը հնարավորություն կտա տեսապրոյեկտորին ապահովել FHD, UXGA, SXGA, WXGA, HD, XGA, SVGA, VGA, Mac, 2D ցուցանիշներով համակարգչի հետ համատեղելիությունը», առնվազն զարմանք է հարուցում:

Նախ նշենք, որ Mac և 2D հապավումները ընդհանրապես որևիցե կապ չունեն կետայնության հետ և նշանակում են՝ ամերիկյան Apple ընկերության արտադրության՝ բոլորիս հայտնի ծրագրային ապահովումն (MAC OS) և տափակ պատկեր (2D – 2 dimensions) համապատասխանաբար:

Կիրարենք այս տեսակ պատասխանն ուրիշ օրինակի վրա՝ ենթադրենք, որ Պատվիրատուն հայտարարել է ավտոմեքենայի ձեռքբերման գնանշման հարցում և պարզաբանման հարցմանը, թե ի՞նչ մեքենա է իրեն հարկավոր՝ մարդատար, թե բեռնատար, նա պատասխանում է, որ Պատվիրատուի համար ընդունելի է ցանկացած տարբերակը:

Տրված պարզաբանումից առաջ է գալիս 2 եզրակացություն՝

a) Գնահատող հանձնաժողովն առանց որևէ կասկածանքի նույն պատրաստականությամբ պատրաստ է գնել ՀՀ ՊՆ-ի կարիքների համար թե VGA (640 x 480 pixels / total 307,200 pixels՝ էլեկտրոնային-ճառագայթային խողովակներով հեռուստացույցների կետայնություն), թե դեռևս որոշ չինական/թայվանական ընկերությունների կողմից արտադրվող SVGA (800 x 600 pixels / total 480,000 pixels) կետայնության լիովին բարոյապես հնացած պրոյեկտորներ, թե այլ իսկական կետայնության սարքեր:

Այսինքն, գնահատող հանձնաժողովը նույնիսկ նեղություն չի կրել որոշել իսկական կետայնության այն նվազագույն ցուցանիշը, որից ցածր իսկական կետայնություն ունեցող պրոյեկտորների ձեռքբերումը ՀՀ ՊՆ-ի կարիքների համար դառնում է առնվազն անիմաստ, եթե ավելին չասենք:

Նշենք նաև, որ ներկայումս կենցաղային հեղուկ-բյուրեղային (LCD) հեռուստացույցների de-facto միջազգային ստանդարտ է հանդիսանում 4K /UHD (3,840 x 2,160 pixels /total 8,294,400) իսկական (ֆիզիկական, native) կետայնությունը, որն 27 (!!!) անգամ գերազանցում է գնահատող հանձնաժողովի կողմից որպես անընդունելի նշված VGA կետայնությունը:

b) Գնահատող հանձնաժողովն ընդհանրապես չի պատկերացնում գնման առարկայի օգտագործման նպատակը, ձախողել է և չի կարողացել օբյեկտիվորեն հիմնավորել գնման առարկայի բնութագրերը և գնման առարկայի համարժեքությունը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

3) Վերոհիշյալ Պարզաբանման հարցման արդեն իսկ 3-րդ հարցով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն խնդրել էր «նշել պահանջվող շարժական-կարգավորվող պրոյեկտորի կախիչի մինիմալ և մաքսիմալ երկարությունը»:

Կարծես թե լիովին պարզ և հասարակ հարց է, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից այս հարցին տրված պարզաբանումը պարզապես ապշեցուցիչ է՝ «Կախիչի չափսերը պետք է լինեն տեսապրոյեկտորին համապատասխան, որը նաև պետք է ամբողջությամբ ապահովի տեսապրոյեկտորի շարժական-կարգավորվող գործառույթը: Բացի այդ ցանկալի է, որ շարժական կարգավորվող լինի նաև կախիչի երկարությունը»:

Գտնում ենք, որ տրված հարցին բացառապես չվերաբերվող գնահատող հանձնաժողովի եզրակացությունը առաստաղային կախիչի վրա կոշտ ամրացված պրոյեկտորի «շարժական-կարգավորվող գործառույթի» վերաբերյալ մեկնաբանելու կարիք չունի:

Իսկ բուն հարցին՝ կախիչի մինիմալ և մաքսիմալ երկարության կապակցությամբ գնահատող հանձնաժողովը պատասխանում է՝ «ցանկալի է, որ շարժական կարգավորվող լինի նաև կախիչի երկարությունը» մինչդեռ 9-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում այդ հանգամանքը սևով սպիտակի վրա ամրագրված է որպես պարտադիր:

Տրված պարզաբանումից առաջ է գալիս հետևյալ եզրակացությունը՝ Գնահատող հանձնաժողովն չի պատկերացնում գնման առարկայի օգտագործման նպատակը, ձախողել է և չի կարողացել օբյեկտիվորեն հիմնավորել գնման առարկայի բնութագրերը և գնման

առարկայի համարժեքությունը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Զուտ իրավական տեսակետից Պատվիրատուի պարզաբանումները վերոհիշյալ առաջին 3 հարցերին ուղղակիորեն և անվիճելի հակասում են 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի (Գնման առարկայի բնութագրերը) 2-րդ կետի դրույթներին, այն է՝ «3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը. 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը...»:

4) Պարզաբանման հարցման մեջ որպես նկատառում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն նշել էր՝ «Կուզենայինք նաև բևեռել Ձեր ուշադրությունն առ այն, որ տեխնիկական բնութագրի հետևյալ առտահայտությունում տեղ է գտել առանցքային հանդիսացող վրիպակ՝ «Տեսապրոյեկտոր լամպային՝ առնվազն 203 watt լամպ»:

Ակնհայտ է, որ եթե լամպը, սպառելով ավելի քիչ էլեկտրականություն, ունակ է արտադրել պահանջված լուսային հոսքն, ապա դա միանշանակ գերադասելի է (պարզ օրինակ՝ կենցաղում, ամենուրեք օգտագործվող LED լամպերը նույն լուսային հոսքն արտադրելու համար սպառում են անչափ քիչ էլեկրականություն քան սովորական շիկացման լամպերը): Ուստի «առնվազն» բառը այստեղ պետք է փոխարինվի «առավելագույնն» բառով:»

Գնահատող հանձնաժողովի պատասխանը հետևյալն էր՝ «Միաժամանակ առաջարկում ենք առաջնորդվել հրավերով հաստատված տեխնիկական բնութագրով, որով սահմանված են պատվիրատուի պահանջարկը բավարարելու համար նախատեսված ցուցանիշները»:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ դիրքորոշումն առ այն, որ տեխնիկական բարելավումների արդյունքում սպառելով ավելի քիչ էներգիա հնարավոր չէ ստանալ պահանջված քանակի լույս, հզորություն և այլն, պարզապես ենթակա չէ մեկնաբանության թե տեխնիկական, թե տրամաբանության տեսակետներից:

Ելնելով վերը նշված փաստերից գտնում ենք, որ Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի (Գնման առարկայի բնութագրերը)՝

- 1-ին կետի դրույթները, այն է՝ «...Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը...».

- 2-րդ կետի դրույթները, այն է՝ «...2. Գնման առարկայի բնութագրերը՝ 3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը. 4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը...».

- 3-րդ կետի դրույթները, այն է՝ «... 3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և ՀՀ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա...»:

Եվ վերջինը, որը չի կարգավորվում գնումների մասին գործող օրենսդրության կանոններով: Ներկայումս, երբ ՀՀ Զինված Ուժերին տրամադրված յուրաքանչյուր լումա պետք է օգտագործվի առնվազն կրկնակի արդյունաբերությամբ, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առանց որևէ խղճի խայթի պատրաստ է հրավերի 9-րդ չափաբաժնով հատկացված 10.4 միլիոն ՀՀ դրամ գումարը ծախսել անընդունելի տեխնիկական բնութագրերով ապրանքների գնման վերաբերյալ հաշվետվության մեջ ընդամենը «նշան դնելու» համար:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի 9-րդ չափաբաժնով գնանշման հարցում անցկացնելու որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերափոխել 9-րդ չափաբաժնով գնման համար նախատեսվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համաձայնեցնելով դրանք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:շ

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն 22.04.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ուշադիր ուսումնասիրելով 21.04.2022թ. gbqa_ohanyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկված նամակը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն բևեռում է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հատուկ ուշադրությունը ստորև թվարկվող հետևյալ փաստերին՝

1) ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի ձևաթղթի վրա տպված վերոհիշյալ նամակը (կատարող՝ Գ. Պողոսյան) ավելի քան զարմանալիորեն չի պարունակում՝ թե ստորագրման ամսաթիվը, թե ելքի հերթական համարը, թե ելքի համարի բացակայության դեպքում անհրաժեշտ կլոր կնիքը, ինչն ուղղակիորեն հակասում է ՀՀ գործող նորմատիվ ակտերի պահանջներին: Այստեղ, բնականաբար, հարց է առաջանում՝ արդյոք ինչպե՞ս է տվյալ նամակը գրանցվել ՀՀ ՊՆ համապատասխան գրանցամատյանում և գրանցվե՞լ է, թե ոչ:

2) Ցավոք, պարզապես անհնար է որևիցե լուրջ մեկնաբանության ենթարկել կամ դիրքորոշում հայտնել մի նամակի վերաբերյալ, որի 2-րդ պարբերությունում պարունակվող հստակ պնդումը, թե Պատվիրատուն «տեխնիկական բնութագիրը ու դրանում ներառված որակը բնութագրող ցուցանիշները սահմանել է ելնելով նվազագույն կարիքը բավարարելու սկզբունքից, ընդ որում՝ Ապրանքը բնութագրված է ամբողջությամբ և հստակ՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունները» ուղղակիորեն հերքվում է հաջորդ՝ հերթով 3-րդ պարբերությունում պարունակվող արտահայտությամբ՝ «այն կարող է լինել ցանկացած մեծության»: Ընդ որում, այդ բառակապակցությունը հենց ինքն էլ՝ կատարող Գ.Պողոսյանը, վստահալից ընդգծել է հաստագիծ տառերով:

Ի դեպ, հատուկ շեշտենք, որ ս.թ. ապրիլի 01-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ARMEPS համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղարկված պարզաբանման հարցման մեջ պարունակվող 4 (չորս) առաջացած հարցերից 3 (երեք) հարցերը վերաբերվում են հենց Ապրանքի նվազագույն բնութագրերին:

Նույն 3-րդ պարբերությունում պարունակվող պնդումն, առ այն, որ չսահմանելով պայծառության (լուսային հոսքի) նվազագույն ցուցանիշը, որն հանդիսանում ե ցանկացած պրոյեկտորի երկու հիմնական բնութագրերից մեկը, գնահատող հանձնաժողովի «ըստ էության Ընթացակարգի շրջանակներում ենթադրում է հնարավոր մասնակիցների կազմի

ընդլայնում և պայծառության ցանկացած ցուցանիշով ապրանքի առաջարկ» պնդումն ոչ միայն հակասում է նորմալ տրամաբանությանն, այլ և միանշանակ հաստատում է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 07.04.2022թ. №1/10-04/07 բողոքում ներկայացված եզրակացությունը առ այն, որ ՝ «Գնահատող հանձնաժողովը նույնիսկ նեղություն չի կրել որոշել պայծառության (լուսային հոսքի) այն նվազագույն ցուցանիշը, որից ցածր լուսային հոսք ունեցող պրոյեկտորների ձեռքբերումը ՀՀ ՊՆ-ի կարիքների համար դառնում է առնվազն անիմաստ, եթե ավելին չասենք»:

3) Որևիցե լուրջ մեկնաբանության թե տեխնիկական, թե տրամաբանական տեսակետներից ենթակա չեն նաև վերոհիշյալ նամակի 4-րդ և 5-րդ պարբերություններն, որոնք ևս միանշանակ հաստատում են «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 07.04.2022թ. №1/10-04/07 բողոքում ներկայացրած եզրակացություններն առ այն, որ Գնահատող հանձնաժողովը ձախողվել է սահմանել թե պրոյեկտորի իսկական կետայնության նվազագույն ցուցանիշը (ցանկացած պրոյեկտորի 2-րդ հիմնական բնութագիրը), թե պահանջվող շարժական-կարգավորվող կախիչի մինիմալ և մաքսիմալ երկարությունը:

4) Գնահատող հանձնաժողովը զարմանալիորեն չի անդրադարձել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի Պարզաբանման հարցման մեջ և առ 07.04.2022թ. №1/10-04/07 բողոքում որպես նկատառում նշված պրոյեկցիոն լամպի հզորության հարցին: Արդյո՞ք դա նշանակում է, որ Գնահատող հանձնաժողովը վերձապես ընդունել է այն պարզ փաստն, որ տեխնիկական բարելավումների արդյունքում սպառելով ավելի քիչ էներգիա հնարավոր է ստանալ պահանջված քանակի լույս, հզորություն և այլն:

5) Ցավոք, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պարզապես անհաջողության մատնվեց, փորձելով որևիցե տրամաբանական կապ գտնել առ 07.04.2022թ. №1/10-04/07 բողոքում բարձրացված հարցերի և Պատվիրատուի կողմից ներկայացված ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանի №03/26-1/19730-2021 նամակի միջև:

Ելնելով վերը շարադրվածից գտնում ենք, որ Գնահատող հանձնաժողովն ընդհանրապես չի ուսումնասիրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի առ 07.04.2022թ. №1/10-04/07 բողոքում ներկայացված պարզ տեխնիկական պարզաբանումները, ընդհանրապես չի պատկերացնում գնման առարկայի օգտագործման նպատակը, ձախողել է և չի կարողացել օբյեկտիվորեն հիմնավորել գնման առարկայի բնութագրերը և գնման առարկայի համարժեքությունը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Ուստի, կրկին պաշտոնապես ներկայացնում ենք պահանջ՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի 9-րդ չափաբաժնով գնանշման հարցում անցկացնելու որոշումը ճանաչել անվավեր (չեղյալ) և պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին վերափոխել 9-րդ չափաբաժնով գնման համար նախատեսվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համաձայնեցնելով դրանք 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6530-2022 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն, 21.04.2022թ.-ի թիվ ՊՆ/02/1942-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Ձեր՝ 14.04.2022թ. գրության հայտնում ենք հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը գնման առարկաների, մասնավորապես՝ բողոքի առարկա հանդիսացող «Տեսապրոյեկտորներ»-ի (այսուհետև՝ Ապրանք) տեխնիկական բնութագիրը ու դրանում ներառված որակը բնութագրող ցուցանիշները սահմանել է՝ ելնելով նվազագույն կարիքը բավարարելու սկզբունքից, ընդ որում Ապրանքը բնութագրված է ամբողջությամբ և հստակ՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունները: Առնվազն անհասկանալի ու անպատասխանատու են բողոքաբեր ընկերության կողմից բողոքում բերված՝ գնահատող հանձնաժողովին վերաբերող որակումները, քանի որ ընկերության կողմից ներկայացված պարզաբանման հարցմանն ի պատասխան՝

գնահատող հանձնաժողովի կողմից տրվել են սպառիչ պատասխաններ, որոնք իրենց մեկնաբանություններով ներկայացվում են ստորև.

Հարցման 1-ին կետով նշված՝ Ապրանքի պայծառության ցուցանիշի վերաբերյալ հայտնել ենք, որ այն կարող է լինել ցանկացած մեծության, որն ըստ էության Ընթացակարգ շրջանակներում ենթադրում է հնարավոր մասնակիցների կազմի ընդլայնում և պայծառության ցանկացած ցուցանիշով ապրանքի առաջարկ:

Հարցման 2-րդ կետով նշված՝ Ապրանքի կետայնության ցուցանիշի վերաբերյալ հայտնել ենք, որ այն պետք է լինի այնպիսի մեծության, որը թույլ կտա Ապրանքի, անխափան աշխատանքը և համատեղելի կլինի տեխնիկական բնութագրում նշված պարամետրերով համակարգչի հետ, այսինքն Ապրանքը պետք է համատեղելի լինի զորամասերում (օգտագործման վայրերում) առկա համակարգիչների հետ,

Հարցման 3-րդ կետով նշված՝ Ապրանքի կախիչի չափսերի վերաբերյալ հայտնել ենք, որ կախիչը պետք է փնի Ապրանքի չափսերին համապատասխան, ըստ էության՝ ի սկզբանե չնախատեսելով կախիչի չափսերի վերաբերյալ պահանջներ, ենթադրվել է, որ ցանկացած արտադրող կախիչի չափսերը պետք է սահմանի Ապրանքի չափսերին համապատասխան: Նախատեսվել է նաև, որ կախիչը պետք է ունենա շարժական-կարգավորվող գործառույթ, որը պարզաբանման պատասխանում նշվել է, բացի այդ բողոքաբերը տեղեկացվել է նաև, որ ցանկալի է, որ շարժական-կարգավորվող լինի նաև կախիչի երկարությունը, ինչը բնավ չի նշանակում, որ հենց երկարության շարժական-կարգավորվող լինելն է պարտադիր:

Հարցման 4-րդ կետով նշված՝ Ապրանքի «գործարանային գրքույկ» ներկայացնելու պահանջի վերաբերյալ հայտնել ենք, որ դրա փոխարեն կարող է լինել նաև բո դոքա բեր ի կողմից առաջարկված «շահագործման հրահանգ»-ը, այսինքն՝ ըստ էության պահանջվել է ցանկացած էլեկտրո տեխնիկ այի վաճառքի հետ արտադրողի կողմից տրված ուղեկցող գրքույկ ե/կամ հրահանգ ե/կամ անձնագիր և/կամ ձեռնարկ և այլն:

Հարկ է նշել նաև, որ Ընթացակարգի հրավերի, Հավելված 6-ում, Ծանոթություններ բաժնի 9-րդ կետով սահմանվել է, որ կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ապրանքներ մատակարարելու դեպքում հնարավոր է ապրանքի ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունը, ինչը ենթադրում է նաև, որ համապատասխան պայմանագիր կնքելու դեպքում՝ բողոքաբերի կողմից տարբերվող,

սակայն բարելավված ցուցանիշներով ապրանք մատակարարելու դեպքում այն ենթակա կլինի ընդունման:

Գնահատող հանձնաժողովի կողմից պարզաբանման հարցերին տրված պատասխաններից պարզ է դառնում, որ բարձրացված հարցերին տրվել են հստակ և լիարժեք պատասխաններ և առնվազն անհասկանալի է բողոքաբերի կողմից ներկայացված բողոքը, որը, միաժամանակ զետեղված է գործընկերային հարաբերություններին ոչ հարիր մեկնաբանություններով և որակումներով:

Վերը նշվածից ելնելով հայտնում ենք, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/63 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից խորհրդանշական նվերների, թվային ֆոտոապարատների, ուժեղացուցիչների, տեսապրոյեկտորների ձեռքբերման նպատակով 31.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) վեճի առարկա հանդիսացող գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով սահմանվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը՝

Գնման առարկայի		
Հ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիր**
9	Տեսապրոյեկտորներ/ Տեսապրոյեկտոր	<u>Տեսապրոյեկտոր</u> Տեսապրոյեկտոր լամպային՝ առնվազն 203watt լամպ, Լամպի կյանքի ժամերը (մինչև) առնվազն 6000 (Bright), 12000 (Dinamic), 10000 (Eco), 15000 (Eco+), օպտիկական նետելու հարաբերակցությունը առնվազն 1.94:1-2.16:1, պրոյեկցիոն հեռավորությունը առնվազն 1մ-12մ, կիզակետային երկարություն (մմ) 21.85-24, բնիկ օֆսեթ 115%, մուտքային միացումները առնվազն HDMIx1, 1.4a 3D suport, 1xVGA (YPbPr/RGB), 1xComposite video, 1xAudio 3.5mm, ելքային միացումները առնվազն 1xVGA, 1xAudio 3.5mm, 1xUSB-A power 1A, խոսնակի հզորություն առնվազն 10W, շահագործման պայմաններ առնվազն 5°C-45°C, Max. խոնավություն 85%: Համակարգչի համատեղելիություն առնվազն FHD, UXGA, SXGA, WXGA, HD, XGA, SVGA, VGA, Mac, 2D համատեղելիություն առնվազն NTSC M/J, 3.58 MHz, 4.43 MHz PAL B/D/G/H/I/M/N, 4.43 MHz SECAM B/D/G/K/K1/L, 4.25/4.4MHz 480i/p, 576 i/p, 720p (50/60Hz), 1080i (50/60Hz), 1080p

		(50/60Hz): Լրացուցիչ՝ Պրոյեկտորի պահպանիչ պայուսակ, հոսանքի միացման լար, հեռակառավարման վահանակ,անհրաժեշտ միջոցներ՝ HDMI ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ, VGA ստանդարտի մալուխ, ոչ պակաս 20մ երկարությամբ: Պատի պրոյեկցիոն էկրան. Էկրան՝ ոչ պակաս 240սմx240սմ, պատին ամրացնելու հնարավորությամբ, պաստառը՝ անկար, ձեռքի ապածավալման հնարավորությամբ: Պրոյեկտորի կախիչ՝ առաստաղին ամրացնելու հնարավորությամբ, շարժական-կարգավորվող: Շահագործման հրահանգ՝ հայերեն կամ ռուսերեն լեզուներով: Ապրանքն ընդունելուց իրականացվում է աշխատանքի փորձարկում ՀՀ ՋՈՒ ԲՀԱ վարչության հետ, մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը: Ամբողջ տեսականուն տրվում է երաշխիքային ժամկետ 1 տարի՝ ապրանքի ընդունման օրվանից: Արտադրող գործարանի գործարանային գրքույկի առկայությամբ: Ներկայացնել արտադրողից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ՝ ապրանքը պատվիրատուին մատակարարելուց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը.

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը

ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված

ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից խորհրդանշական նվերների, թվային ֆոտոապարատների, ուժեղացուցիչների, տեսապրոյեկտորների ձեռքբերման նպատակով 31.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-

ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով վեճի առարկա հանդիսացող գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով սահմանվել է ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագիրը:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, մասնավորապես՝ Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների խախտման հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ վկայակոչված դրույթի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի դիրքորոշման և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով և գնահատելով Ընթացակարգի հրավերի 9-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմաններն ու բողոքարկման կողմերի կողմից ներկայացված ապացույցները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պայմանների մասով թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ գնման առարկայի բնութագրերի հատկանիշների ամբողջական ու հստակ լինելու առումով, և որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրն կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտադիր (իմպերատիվ) պահանջներին:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ վեճի առարկա հանդիսացող գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով կազմված տեխնիկական բնութագրերը չեն բխում Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից, ըստ այդմ՝ ենթակա են համապատասխանեցման՝ նշված դրույթներին:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ գնման առարկայի բնութագրերի հատկանիշների ամբողջական ու հստակ լինելու առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը՝ 9-րդ չափաբաժնի մասով, պետք է փոփոխել՝ համապատասխանեցնելով Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/63 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-3/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով կատարել սույն որոշմամբ նշված փոփոխություններ: Փոփոխություն կատարելու անհնարինության դեպքում գնման ընթացակարգը նույն չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**